**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020 yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

17 օգոստոսի 2020 թվականի N 199

ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի և 24-րդ կետի, «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի 1-ին կետի դրույթներով և հիմք ընդունելով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 13.08.2020 թվականի թիվ ՍՊ//23097-2020 հանձնարարականի պահանջները.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի համայքապետարանի աշխատակազմի քարտուղարի (ծածկագիր՝ 1.2-1) համայնքային ծառայության պաշտոնի անձնագրում կատարել լրացում՝

1. Բարեվարքության հարցերով կազմակերպիչը՝

1) հանրային ծառայողներին տրամադրում է անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների վերաբերյալ մասնագիտական խորհրդատվություն, ներկայացնում շահերի բախման իրավիճակի լուծմանն ուղղված քայլեր ձեռնարկելու վերաբերյալ առաջարկություն.

2) իրականացնում է բարեվարքության հարցերով վերապատրաստման կարիքների բացահայտում և վերապատրաստման ծրագրերի, ինչպես նաև բարեվարքության պահանջների պահպանմանն ուղղված այլ ծրագրերի մշակում.

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2020թ. օգոստոսի 17

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020 yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

19 օգոստոսի 2020 թվականի N 200

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ, ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԸ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ''Տեղական ինքնակառավարման մասին'' Հանրապետության Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2011թ.-ի թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ.թիվ 2387-Ն որոշման պահանջները, հաշվի առնելով ավագանու 27.12.2019թ.-ի թիվ 98-Ն որոշումը և Եղեգնաձորի համայնքապետարանի գլխավոր-մասնագետ գլխավոր-ճարտարապետ Ա. Աղաջանյանի 18.08.2020թ.-ի եզրակացությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Թույլատրել փոփոխելու Կարինե Նորիկի Խաչատրյանին սեփականության իրավունքով պատկանող, համայնք Եղեգնաձոր ք., Կամոյի փողոց թիվ 2/26 հասցեում գտնվող 0.00867 հա մակերեսով, նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ այլ հողեր հողատարածքի գործառնական նշանակությունը որպես հասարակական կառուցապատման:

2. Կարինե Նորիկի Խաչատրյանին պատկանող համայնք Եղեգնաձոր ք., Կամոյի փողոց 10/23-10/24 /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների գրանցման թիվ 31052013-10-0003 վկայական/, համայնք Եղեգնաձոր ք., Կամոյի փողոց 2/25/ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների գրանցման թիվ 27052019-10-0002 վկայական/ և համայնք Եղեգնաձոր ք., Կամոյի փողոց 2/26 /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների գրանցման թիվ 01112019-10-0016 վկայական/ հասցեներում գտնվող հողատարածքները միավորել և տրամադրել հետևյալ հասցեն՝համայնք Եղեգնաձոր ք., Կամոյի փողոց թիվ 2/25:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում անձին որոշման մասին իրազեկելու պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020 yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 օգոստոսի 2020 թվականի N 201

## ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՕՐԻՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑԻ ՕՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Եղեգնաձոր համայնքի ավագանու 13.03.2020թ.-ի թիվ 41-Ա որոշումը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման պահանջները և օրինական կառույցը գնելու վերաբերյալ Ջուլետա Աշոտի Գաբրիելյանի կողմից գնման համաձայնությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Համայնքի ղեկավարի կողմից օրինական ճանաչված համայնք Եղեգնաձոր ք., Միկոյան փողոց 14/15 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 38.03 քմ մակերեսով ավտոտնակը և զբաղեցրած ու սպասարկման համար առանձնացված 0.00405 հա մակերեսով հողատարածքն ուղղակի վաճառքով վաճառել Ջուլետա Աշոտի Գաբրիելյանին շինության համար 84440 ՀՀ դրամ և հողատարածքի համար 50310 ՀՀ դրամ արժեքով:

2. Քաղաքացու հետ կնքել առուվաճառքի պայմանագիր:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անձին որոշման մասին իրազեկելու պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2020թ. օգոստոսի 20
ք.Եղեգնաձոր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020 yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 օգոստոսի 2020 թվականի N 202

### ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՕՐԻՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑԻ ՕՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Եղեգնաձոր համայնքի ավագանու 13.03.2020թ.-ի թիվ 41-Ա որոշումը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման պահանջները և օրինական կառույցը գնելու վերաբերյալ Ազատ Գառնիկի Բարսեղյանի կողմից գնման համաձայնությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Համայնքի ղեկավարի կողմից օրինական ճանաչված համայնք Եղեգնաձոր ք., Արսենյան փողոց 9/10 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 47.36 քմ մակերեսով ավտոտնակը և զբաղեցրած ու սպասարկման համար առանձնացված 0.00244 հա մակերեսով հողատարածքն ուղղակի վաճառքով վաճառել Ազատ Գառնիկի Բարսեղյանին շինության համար 96570 ՀՀ դրամ և հողատարածքի համար 30310 ՀՀ դրամ արժեքով:

2. Քաղաքացու հետ կնքել առուվաճառքի պայմանագիր:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անձին որոշման մասին իրազեկելու պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2020թ. օգոստոսի 20
ք.Եղեգնաձոր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք

Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020 yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

**Ո Ր Ո Շ Ու Մ**

20 օգոստոսի 2020 թվականի N 203

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԸ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 29 դեկտեմբերի 2005թվականի թիվ 2387-Ն որոշումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետությանը սեփականության իրավունքով պատկանող, համայնք Եղեգնաձոր ք., Վ. Զորավարի փողոց 34/1 հասցեում գտնվող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 03102019-10-0006) և համայնք Եղեգնաձոր ք., Զորավար Վարդան փողոց 12/1 հասցեում գտնվող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 09112018-10-0006) հողատարածքները միավորել և տրամադրել հետևյալ հասցեն՝համայնք Եղեգնաձոր ք., Զորավար Վարդան փողոց թիվ 12/1:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման մասին իրազեկելու պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2020թ. օգոստոսի 20
ք.Եղեգնաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020 yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

## *Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

*21 օգոստոսի 2020 թվականի N 204*

## *ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՀԱՍՑԵԻ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումը և հաշվի առնելով ավագանու 27.12.2019թ-ի թիվ 98-Ն որոշումը.

*ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝*

1. Աստղիկ Հենրիկի Բաբայանին սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման թիվ 2617847 վկայական) հողատարածքի ՝ ք. Եղեգնաձոր, Անդրանիկի 12/Ա-17 հասցեն փոփոխել և տրամադրել հետևյալ հասցեն՝ Վայոց ձորի մարզ, համայնք Եղեգնաձոր ք.,Անդրանիկի փողոց թիվ 12/1/14 :
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անձին առձեռն հանձնելու պահից:

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*

2020թ. օգոստոսի 21
ք.Եղեգնաձոր